ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 46-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 93-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում և անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումների ձևերը սահմանելու մասին» N 93-Լ հրամանի նախաբանը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

1) «Հիմք ընդունելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության

վարչապետի ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով.»:

2. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում և անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումների ձևերը սահմանելու մասին» N 93-Լ հրամանի N 1 հավելվածի, N 2 հավելվածի 3-րդ կետերում «հիմնավորումը» և N 3 հավելվածի 3-րդ կետում «պատճառաբանությունը» բառերից հետո ավելացնել «,ընտանեկան և կենցաղային բռնության դեպքը հաստատող և հերքող փաստական այլ տվյալներ ձեռք չբերելու վերաբերյալ գրառումը» բառերը:

3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

08.07.2026թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ